ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ» ՈՒՂԵԳԾԱՅԻՆ ԵՎ 10 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՃԵՄՈՒՂՈՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ 1:2000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՀԱՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/ 01

14 օգոստոս 2020 թ.

ք. Երևան

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արխի Լաբ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գալստյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8900000 (ութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանասական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար

ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7	«Արխի լաբ» ՍՊԸ Գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Կիևյան 1բ Իրավաբանական հասցեն՝ Դավթաշեն 3թ. 9շ.բն 5 Բանկը՝ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328	Հ/Հ220315590921000 ՀՎՀՀ 00202184
Գլխավոր քարտուղար՝ _____ Ա. Թոխմաջյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն_____Ս. Գալստյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	71351250/501		դրամ	8900000	1		ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.

«Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայություններ

1. **Ներկա իրավիճակը և ծառայությունների մատուցման նպատակը**

Սևան ազգային պարկի սահմանը կադաստրային քարտեզներում տեղադրված է ըստ առկա նկարագրի, որը, ըստ էության, բազմաթիվ վայրերում չի համապատասխանում բնության իրավիճակին և բազմաթիվ սուբեկտների համար ստեղծում է գրեթե անլուծելի խնդիրներ: Այս ծառայությունների իրականացման արդյունքում հավաքագրված ճշգրիտ քարտեզագրական տեղեկատվությունը հնարավորություն կտա հստակ տարանջատել Սևան ազգային պարկի սահմանը և այնուհետև կատարել իրավունքների պետական գրանցում: Սևան ազգային պարկի սահմանը կադաստրային քարտեզներում տեղադրված է ըստ առկա նկարագրի, որը, ըստ էության, բազմաթիվ վայրերում չի համապատասխանում բնության իրավիճակին և բազմաթիվ սուբեկտների համար ստեղծում է գրեթե անլուծելի խնդիրներ: Այս ծառայությունների մատուցման արդյունքում հավաքագրված ճշգրիտ քարտեզագրական տեղեկատվությունը հնարավորություն կտա հստակ տարանջատել Սևան ազգային պարկի սահմանը և այնուհետև կատարել իրավունքների պետական գրանցում: Ծառայությունների մատուցման ընթացքում նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության Սևան ազգային պարկի սահմանագծի, 1901,5մ և 1903, 1905մ բացարձակ նիշերը և 10 կմ երկարությամբ ճեմուղու 1:2000 օդալուսանկարահանումը:

Ծառայությունների մատուցման տեխնիկական պահանջները

Սևան Ազգային պարկի սահմանագծի, 1901,5 մ և 1905,0 մ նիշերին 10 կմ երկարությամբ ճեմուղու հանութագրման ծառայությունների իրականացման գործընթացում անճշտություններից խուսափելու համար, անհրաժեշտ է օգտագործել օրթոֆոտոհատակագծեր (2014 թ. Օդալուսանկարներից կազմված՝-95 օրթոնկար) և ֆիքսված թևերով անօդաչու թռչող սարքեր: Ծառայության իրականացման ընթացքում անհրաժեշտ է Կադաստրի կոմիտեից ձեռք բերել առկա օդային լուսանկարները և համակցելով դրանք նոր նկարահանվող տարածքների հետ իրականացնել տվյալների մշակում: Ֆոտոգրամետրիական եղանակով ստեղված տեղագրական խոշորամասշտաբ հանութագրման նյութերը անհրաժեշտ հիմք կհանդիսանան կադաստրային քարտեզագրման միասնական կոորդինատային համակարգում ազգային պարկի և ճեմուղու սահմանների անցկացման, դրանց ամրացման և օրենսդրական ակտերով հետագա ձևակերպման գործընթացին:

1. **Ծառայությունների մատուցման միջոցառումները**

1:2000 մասշտաբի Սևան Ազգային պարկի ուղեգծային լայնությամբ սահմանի հատվածով հանութագրումն իրականացնելու, ինչպես նաև 10 կմ երկարության ճեմուղու համար նախատեսվում է կատարել հետևյալ միջոցառումները:

- Հաստատված ծավալներով (Ազգային պարկի շրջագծի ընդհանուր երկարությունը 237 կմ է և 50մ լայնության դեպքում կազմում է 1185 հա տարածք, և ճեմուղու համար 100 հա) կազմել տեխնիկական նախագծեր:
- Ֆոտոգրամետրիայի համար նախատեսված ֆիքսված թևերով անօդաչու թռչող սարքերով 2014 թվականի օրթֆոտոհատակագծերով չծածկված տարածքների և անհրաժեշտության դեպքում 2014 թվականին ծածկված տարածքների համար իրականացնել օդալուսանկարահանում, կապակցվող գեոդեզիական կետերի օգնությամբ ստեղծել օրթոֆոտոհատակագծեր 5սմ պիկսելով:
- Իրականացնել օրթոֆոտոհատակագծերի դաշտային և գրասենյակային վերծանում:
- Ուսումնասիրել առկա (եթե կան) հողօգտագործման չափագրված գույքերով հատակագծերը, համեմատել դրանք օրթոֆոտոհատակագծերի հետ:
- Իրականացնել GNSS արբանյակային ռովեր կայաններով սահմանգծերի շրջադարձային գեոդեզիական խտացման հիմնակետերի տեղադրման և դիտարկման աշխատանքներ, ստանալով դրանց կոորդինատների կատալոգները (100 հիմնակետ):
- Օդալուսանկարահանման, GNSS արբանյակային ռովեր կայանով 100 հիմնակետերի դիտարկման և տախեոմետրական հանութագրման ծառայություններում անհրաժեշտ է՝
  - -ընդգրկել հինգ որակավորված մասնագետներ,
  - -կիրառել ճշգրիտ օրթոֆոտոհատակագծերի ստեղծման համար անհրաժեշտ մասնագիտացված ֆիքսված թևերով անօդաչու (թևերով) թռչող 2 (երկու) սարք,
  - - արբանյակային GNSS ընդունիչ 2(մեկ) բազային կայան,
  - - արբանյակային GNSS ընդունիչ 4 (չորս) ռովեր կայան,
  - - ժամանակակից էլեկտրոնային 2 (երկու)տախեոմետր:
- Ստացված դաշտային չափագրման արդյունքների հիմնան վրա ըստ տեղագրական տարրերի արդյունքների կետերի կոորդինատները տեղաբաշխել և ստանալ տարածքների 1:2000 մասշտաբի ուղեգծային հատակագծեր:
- Ստացված 1:2000 մասշտաբի ուղեգծային հատակագծերում առանձնացնել 1901.5 և 1905 մետրերի բացարձակ բարձրության նիշերով հորիզոնականները, ընդ որում անտառապատ տարածքներում վերը ներկայացված նիշերը պետք է հանութագրվեն էլեկտրոնային տախեոմետրերով և հնարավորության պարագայում GPSհամակարգերով և պատվիրատուին պետք է ներկայացվեն գործիքներից ներբեռնված չմշակված ֆայլերը:
- Հաստատված ծավալներով Սևան ազգային պարկի ընդհանուր շրջագծի և 10 կմ ճեմուղու հանութագրված տեղամասերի միջհամայնքային սահմանների համաձայնեցումներում կատարել բոլոր անհրաժեշտ աջակցման գործառույթները, մասնակցել Սևան ազգային պարկի ՊՈԱԿ-ի և համայնքների միջև ընթացող աշխատանքներին, անհրաժեշտության պարագայում կատարել վերաչափագրումներ և նոր փաթեթների կազմում: Ճեմուղու տարածքի համար կազմել բոլոր հատակագծերը, որտեղ պետք է արտացոլվեն բոլոր վերգետնյա ենթակառուցվածքները, շենք շինությունները, ժամանակավոր կացարանները, շվաքարանները, ռելիեֆի տարրերը 0,5մ հորիզոնականների անկումով և այլն: Հանութագրման տվյալները պետք է ներկայացվեն Shapefile ձևաչափով, որում պետք է լրացված լինեն հանութագրված օբեկտների հիմնական բնութագրիչները, որպես ատրիբուտային տեղեկատվություն:
- Կազմել և տրամադրել անհրաժեշտ քանակության փաթեթներ, որոնք պետք է ներկայացվեն ՀՀ Կադաստրի կոմիտե իրավունքների գրանցման:
- Օրթոֆոտոնկարներից հանել ռազմական նշանակության օբյեկտների տարածքները:
- Ծառայությունների կատարման արդյունքում պատվիրատուին պետք է ներկայացվեն բոլոր տիպի ելակետային տվյալները և դրանց ձեռքբերման կտրոնները, բոլոր օգտագործված գործիքների չմշակված տվյալները, ծառայության մատուցման արդյունքում ստեղծված կետերի ամպը DTMև DSMձևաչափով, օրթոֆոտոհատակագծերը GeoTif ձևաչափով, Սևան ազգային պարկի սահմանագիծը, 1901,5մ և 1905մ նիշ ունեցող հորիզոնական գծերը DWG ձևաչափով, համայնքի ղեկավարների և Սևան ազգային պարկի կողմից հաստատված հատակագծերը, Կադաստրի կոմիտե գրանցման նպատակով ներկայացվող ամբողջական պաթեթներ ըստ քանակային պահանջի:

- Կատարողը պարտավորվում է Կադաստրի կոմիտե ներկայացվող փաստաթղթերում կատարել այն բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, որոնք անհրաժեշտ կլինեն ՀՀ Կադաստրի կոմիտեում իրավունքների գրանցման, սահմանագծի ճշտման գրանցման դիմումների ընթացքում:
- Մրցույթի փաթեթի հետ հայտ ներկայացնող ընկերությունը պետք է ներկայացնի նաև որակավորված մասնագետների կենսագրական տվյալները, համանման ծառայությունների մատուցմանընկերության փորձը, օգտագործվող բոլոր սարք սարքավորումների տեխնիկական բնութագրիչները:
- Ծառայությունների ամբողջական իրականացման արդյունքում անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական հաշվետվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7	«Արխի լաբ» ՍՊԸ Գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Կիևյան 1բ Իրավաբանական հասցեն՝ Դավթաշեն 3թ. 9շ.բն 5
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328	Բանկը՝ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ220315590921000 ՀՎՀՀ 00202184
Գլխավոր քարտուղար՝ _____ Ա. Թովմասյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն_____Ս. Գալստյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

14.08.2020 թ. կնքված թիվ ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 07 սեպտեմբեր 2020 թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Արխի լաբ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020 թվականի օգոստոսի 14-ին կնքված «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2020 թ.-ի դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«Արխի լաբ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Կիևյան 1 բ
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 220315590921000
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 00202184
Գլխավոր քարտուղար----------Ա. Թովմասյան	տնօրեն ---------- Ս. Գալստյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

14.08.2020 թ. կնքված թիվ ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(«Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայություններ)

ՀՀ դրամ

Ծառայության					
հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.միջանց իկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351250/501	«Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայություններ	4450000	8900000	8900000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար----------Ա. Թովմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արխի լաբ» ՍՊԸ
ք. Երևան, Կիևյան 1 բ
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220315590921000
ՀՎՀՀ 00202184

տնօրեն ---------- Ս. Գալստյան
(ստորագրություն)
Կ.Տ.